Պարոն/Տիկին Ն. Գաբրիելյան *ին*
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Գարեգին Բաղրամյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել համիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղրամյան

«30» 05 *2023թ.*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատակիցների անունը, ազգանունը- Կամո Սարգսյան, Մոմջյան Մարիամ.

2. Զբաղեցրած պաշտոնը- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ.

3. Գործուղման վայրը և ժամկետները-Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, 2023 թվականի մայիսի 23-ից 25-ը.

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)-Եվրասիական տնտեսական հանձնաժողովի առևտրային քաղաքականության դեպարտամենտ,

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)- Եվրասիական տնտեսական II համաժողովին և դրա շրջանակում կազմակերպվող «Կանաչ Եվրասիա» միջազգային կլիմայական մրցույթի մրցանակաբաշխությանը մասնակցություն:

2020 թվականի դեկտեմբերի 11-ին Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից հաստատված՝ մինչև 2025 թվականը Եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղությունների համաձայն՝ տնտեսական համագործակցության և ինտեգրացման գերակա ոլորտներից մեկը էներգետիկայի բնագավառն է, որի հիմնախնդիրների քննարկումը Եվրասիական տնտեսական II համաժողովի ընթացքում քննարկվող հիմնական ուղղություններից էր: Միաժամանակ, Եվրասիական տնտեսական II համաժողովի և դրա շրջանակում կազմակերպված «Կանաչ Եվրասիա» միջազգային կլիմայական մրցույթի նպատակը նշված համագործակցության ուղիների խորացման հնարավորությունների, նոր ուղիների բացահայտումը և գործընկերների հետ փորձով փոխանակվելն էր:

6. Քննարկված թեմաները (հարցերը). Էներգետիկայի բնագավառում ԵԱՏՄ երկրների ջանքերը ուղղված են ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանի և ԵԱՏՄ էներգետիկ անվտանգության ապահովմանը, ազգային և ԵԱՏՄ տնտեսության ներուժի աճին և դրա ամրապնդմանը: Այդ նպատակով ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացները էներգետիկայի բնագավառում կենտրոնացված և ուղղված են համագործակցության և երկխոսության խորացմանը՝ էներգիայի տարբեր աղբյուրների նկատմամբ ոչ խտրական մոտեցման ապահովմանը, մաքուր տեխնոլոգիաների խթանման կիրառմանը, կլիմայական հիմնախնդիրների լուծմանը: Եվրասիական տնտեսական ֆորումի Էներգետիկ անվտանգությանը վերաբերող քննարկման ժամանակ քննարկման առարկա դարձան այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝

- Նավթի և գազի արդյունահանման, ներդրումների, փոխադարձ և արտաքին առևտրի կազմակերպման ընթացիկ միտումներն ու կանխատեսումները, նոր միավորների ստեղծումը,
- Երկարաժամկետ հիմունքներով ազգային տնտեսություններին հիմնական էներգետիկ ռեսուրսներով ապահովումը և ԵԱՏՄ ընդհանուր էներգետիկ շուկաների ձևավորումը.
- Հեղուկ բնական գազի շուկայի զարգացման հնարավորությունները ԵԱՏՄ-ում.
- Էլեկտրաէներգիայի կենտրոնացված առևտրի իրականացումը, շուկայական գնագոյացումը և միության ընդհանուր էլեկտրաէներգիայի շուկայի մասնակիցների համար ոչ խտրական պայմանների ապահովումը,
- Կենտրոնական Ասիայի էներգետիկ համակարգերի վերահսկելիության և էներգետիկ անվտանգության ապահովումը, կարգավորման հստակ և թափանցիկ մեխանիզմների և տեխնիկական պահանջների ստեղծման անհրաժեշտությունը:

Եվրասիական տնտեսական ֆորումի «ԵԱՏՄ-ի կլիմայական օրակարգը, նոր միտումներ և գործնական լուծումներ» թեմայով քննարկման ժամանակ քննարկման առարկա դարձան այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ԵԱՏՄ-ում կլիմայական գործընթացների կարգավորման անհրաժեշտությունը, ցածր ածխածնային տեխնոլոգիաների լուծումների կիրառման անհրաժեշտությունը, վերականգնվող էներգետիկայի դերը այդ բնագավառում, մարտահրավերները, այդ ոլորտում ակնկալվող բիզնես հնարավորությունները և ռիսկերը, կանաչ ֆինանսավորման հիմնահարցերը: Մասնավորապես, նշվեց, որ 2021 թվականին Միության անդամ երկրների ղեկավարները հայտարարել են ԵԱՏՄ անդամ երկրների միջև տնտեսական համագործակցությունը նաև կլիմայական օրակարգի շրջանակներում զարգացնելու մտադրության մասին՝ ԵԱՏՄ

միասնական շուկայի գործողության սկզբունքների հիման վրա: Ընդունվել է գործողությունների ծրագիր, որի շրջանակներում, ի թիվս այլ հարցերի, ներկայումս մշակվում է փարիզյան համաձայնագրի իրականացման նպատակով ԵԱՏՄ երկրների կողմից համատեղ մոտեցման որդեգրման հնարավորությունը: Այդ նպատակով փոխըմբռնելի կարգավորող իրավական ակտերի մշակման նպատակով անհրաժեշտ է միավորել ջանքերը, որը կնպաստի ԵԱՏՄ կլիմայական օրակարգի առաջընթացին:

Եվրասիական տնտեսական II համաժողովի շրջանակում նախատեսված էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և «Նոր նախագծերի խթանման ռազմավարական նախաձեռնությունների գործակալության» կողմից կազմակերպված «Կանաչ Եվրասիա» կլիմայական առաջին միջազգային մրցույթի արդյունքների հրապարակումը և մրցանակաբաշխության իրականացումը:«Կանաչ Եվրասիա» առաջին միջազգային կլիմայական մրցույթը կլիմայի ոլորտի տարվա գլխավոր իրադարձությունն է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքում: Մրցույթին ներկայացվել էր գրեթե 300 հայտ Եվրասիական միության բոլոր երկրներից՝ տարբեր անվանակարգերում: «Կանաչ Եվրասիա» կլիմայական առաջին միջազգային մրցույթում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պարգևատրվել է «Ցածր ածխածնային զարգացման ոլորտի պետական քաղաքականություն» անվանակարգում՝ զբաղեցնելով 1-ին տեղը:

Մրցույթի շրջանակում ներկայացվող հայտերով ԵԱՏՄ գործընկերներին ներկայացվել է ՀՀ վերականգնվող էներգետիկայի խթանման մեխանիզմների դրական փորձը և ձեռքբերումները, որը կարող է օգտակար լինել ինչպես ԵԱՏՄ անդամ բոլոր երկրների համար, այնպես էլ նպաստել ԵԱՏՄ կլիմայական օրակարգի առաջխաղացմանը և կլիմայի փոփոխության հետևանքների մեղմմանը:

7. Հանդիպումները, ելույթները.–Մրցույթի մասնակցության համար պատրաստվել էր «Հայաստանում վերականգնվող էներգետիկայի աջակցության մեխանիզմները: էներգետիկ համակարգի և սպառողների օգուտներ» թեմայով զեկույց, որով էլ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը զբաղեցրեց պետական քաղաքականության անվանակարգում ԵԱՏՄ-ում 1-ին տեղը (զեկույցի պատճեն կցվում է):

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.–Հանդիպումների ընթացքում քննարկվեցին մասնակիցների համար հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք վերաբերում են մասնավորապես վերականգնվող էներգետիկայի արտադրության և սպառման խթանմանը, վերականգնվող էներգետիկայի խթանման մեխանիզմների

կատարելագործմանը,, կլիմայական հիմնահարցերի և էներգետիկայի բնագավառի փոխազդեցության խորացմանը: Մասնավորապես, կլիմայի կարգավորման ենթակառուցվածքի հիմնական տարրերի ձևավորումըև տնտեսության այլ ոլորտների հետ փոխհարաբերությունների խորացումը սահմանվեց որպես հետագա գործողությունների անկյունաքարային ուղղություն: Այս խնդրի հաջող լուծումը կախված է ինչպես անդամ երկրների միջև տեխնոլոգիական համագործակցության, տնտեսական կապերի և առևտրային հարաբերությունների խորացումից, ներդրումների զարգացումից և, ի վերջո, կլիմայական նպատակների իրագործումից:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Հաշվի առնելով վերականգնվող էներգետիկայի զարգացման ազդեցությունը ինչպես ԵԱՏՄ երկրների էներգետիկայի բնագավառում ինտեգրացիոն գործընթացների խորացման վրա, այնպես էլ կլիմայական օրակարգի, ֆինանսական համակարգի և սպառողների սոցիալ-տնտեսական բարեկեցության վրա՝ վերականգնվող էներգետիկայի բնագավառում ԵԱՏՄ անդամ երկրների փորձը, վերականգնվող էներգետիկ համակարգերի ինտեգրման հնարավորությունների վերհանումը, տեխնոլոգիական համագործակցության խթանումը դարձնել 2023 թվականին կազմակերպվող միջոլորտային քննարկումների և փորձի փոխանակման առարկա:

Գործուղվողներ՝

Կամո Մարգսյան ---------- 30. մայիս 2023թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)

Մարիամ Մոմջան ---------- 30 մայիս 2023թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով , ք. Երևան Սարյան 22
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Հաստատում եմ ՀՀ ՀԾԿՀ Գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյան
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

265805 Երկու հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր հինգ դրամը
(թվերով) (տառերով)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N _____

առհաշիվ գումարների ծախսման մասին

«26» « Մայիսի » 2023թ.
(կազմման ամսաթիվը)

23.05-25.05 2023թ.
(ժամանակաշրջանը)

Հաշվետու անձ ՀՀ ՀԾԿՀ սակագնային քաղաքականության վարչ. սակագնային բաժնի պետ Մարիամ Մոմջյան
(կառուցվածքային ստորաբաժանման անվանումը) (պաշտոնը) (անունը, ազգանունը)

Գումարների տրամադրման նպատակը գործուղում ք. Մոսկվա՝ հմձ.23.05.23թN 401-ԳՔ,26.05.23թN420-ԳՔ հր.ների

Առ հաշիվ գումարը						
Սկզբնական մնացորդը	ստացել է				ծախսվել է	Վերջնական մնացորդը
	ամսաթիվը			ընդամենը		
	23.05.2023թ.	____ _____ 20 թ.	____ _____ 20 թ.			
1	2	3	4	5	6	7
	161762			161762	265805	-104043

104043 դրամի մնացորդը մուտքագրվել է, գերածախսը վճարվել է
(թվերով) (թողնել ճիշտը)

(մուտքի կամ ելքի դրամարկղի օրդերների վավերապայմանը)

_____ դրամ
(տառերով)

Այլ տեղեկություններ _____

Հաշվետվությունն ընդունեց և ստուգեց գլխ. հաշվապահ՝ Հայկանուշ Սաֆարյան
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

NN-ը/կ	Փաստաթղթի անվանումը, համարը, ամսաթիվը	Կատարված ծախսման բնույթը (նպատակային օգտագործումը)	Քանակը	Գինը	Գումարը
1	2	3	4	5	6
1	29.12.2005թ., 2335-Ն որոշում	Օրապահիկ	3	33218	99653
2	Հյուրանոցից՝ հաշիվ վավերագիր թիվ 8640729/1	Գիշերավարձ		166152	166152
		ԸՆԴԱՄԵՆԸ			**265805**

Հաշվետու անձ **ՀՀ ՀԾԿՀ սակագն.քաղ. վարչ. սակագնային բաժնի պետ** **Մարիամ Մոմջյան**

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հավելված _____ էջ

(փաստաթղթերի էջերի թիվը տառերով)

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով , ք. Երևան Սարյան 22
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Հաստատում եմ ՀՀ ՀԾԿՀ Գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյան
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

265805 Երկու հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր հինգ դրամը
(թվերով) (տառերով)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N _____

առհաշիվ գումարների ծախսման մասին

«26» « Մայիսի » 2023թ.
(կազմման ամսաթիվը)

23.05-25.05 2023թ.
(ժամանակաշրջանը)

Հաշվետու անձ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Կամո Սարգսյան
(կառուցվածքային ստորաբաժանման անվանումը) (պաշտոնը) (անունը, ազգանունը)

Գումարների տրամադրման նպատակը գործուղում ք. Մոսկվա՝ հմձ.23.05.23թN 400-ՀՆ,26.05.23թ. N421-ՀՆ հր.ների

Սկզբնական մնացորդը	Առ հաշիվ գումարը				ծախսվել է	Վերջնական մնացորդը
	ստացել է					
	ամսաթիվը			ընդամենը		
	23.05.2023թ.	____ _____ 20 թ.	____ _____ 20 թ.			
1	2	3	4	5	6	7
	161762			161762	265805	-104043

104043 դրամի մնացորդը մուտքագրվել է, գերածախսը վճարվել է
(թվերով) (թողնել ճիշտը)

(մուտքի կամ ելքի դրամարկղի օրդերների վավերապայմանը)

_____ դրամ
(տառերով)

Այլ տեղեկություններ _____

Հաշվետվությունն ընդունեց և ստուգեց գլխ. հաշվապահ՝ Հայկանուշ Սաֆարյան
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

NN-ը/կ	Փաստաթղթի անվանումը, համարը, ամսաթիվը	Կատարված ծախսման բնույթը (նպատակային օգտագործումը)	Քանակը	Գինը	Գումարը
1	2	3	4	5	6
1	29.12.2005թ., 2335-Ն որոշում	Օրապահիկ	3	33218	99653
2	Հյուրանոցից՝ հաշիվ վավերագիր թիվ 8640730/1	Գիշերավարձ		166152	166152
		ԸՆԴԱՄԵՆԸ			**265805**

Հաշվետու անձ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Կամո Սարգսյան

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հավելված _____ էջ

(փաստաթղթերի էջերի թիվը տառերով)